յաղթել անոր մտաց հաստատութեան. ուզեց զրկել առ սանձախ Պարոն-Լուսին. թերեւս նա աւելի բարեբաստ գտնուի փափաքելի յաղթանակը ձեռք բերելու. բայց հոն ալ՝ նոյն անվկանդ ամրութիւն ի պատանեակն, հաւասար կորանք պարտութեան։

Բանտին մէջ ուր ձգեցին զինքը, և Ինաց յունուարի քսանըհինգէն մինչև ի հնգետասան մայիսի, քահանայք և բազմութիւն ժողովրդեան, և որ աւելի սրտաշարժ է, նաև հասակակից քրիստոնեայ մանկունք կը յաճախէին առ նա, կը խրախուսէին, կը քաջալերէին և սուրբ կապանքն համբուրելով՝ երանի կու տային նմա։ Հոն ի բանտին զօրացաւ նաև երկնահրաշ այցելութեամբ սրբոյ Լուսաւորչին, և հրեշտակաց Աստուծոյ, որ ըստ վկայագրին «ըստ նմանութեան մանկանց տղայոց երևէին նմա. այլ և տէր մեր Յիսուս Քրիստոս՝ բազում զօրօք և հրեշտակօք իջանէր յերկնից ի բանտն, և զօրացուցանէր զծառայն իւր զսուրբն Պարոն-Լոյս»։

Երանելւոյն ծնողքն ամէն ջանք ըրին ազատել իրենց սիրելի որդեակը. սրտաճմլիկ աղաչանօք, դրամոց և առատ պարգևաց խոստմամբ կը յուսային ապրեցընել զնա ի մահուանէ. և նաւով Սեաւ ծովու վտանգաւոր ճամբան կտրելով զնացին մինչ ի Պոլիս, արտասուագին պաղատանաց ձայնը հասուցին առ թագաւորն, և ազատութեան հրամանագրով դարձան ի Կաֆա. բայց պատանեկին դէմ յուզուած ատելութիւնը այնչափ բուռն էր և սպառնալից, որ դատաւորք չհամարձակեցան այդ արքունի պատուէրը ի գործ դնել, և դատապարտեցին զնա ի մահ։

Գլխատման տեղը ուրախութեամբ կը դիմէր